ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/124 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թատրոնի բեմի ձայնային համակարգի (Գյումրու Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոն) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 05.08.2025 թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան
Ցոլակ Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արմինե Սահակյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«Բրիդջ» ՍՊԸ
2	«Վամար Գրուպ» ՍՊԸ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 «Բրիդջ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 ԷԱՃ-ի ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Հ/Հ	Գնման գինը, ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումները			
		«Բրիդջ» ՍՊԸ		«Վամար Գրուպ» ՍՊԸ	
		Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ			
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ-ն
1	**43916000**	34654955	41585946	35019744	35019744

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին

5.1 **«Բրիդջ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, իսկ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Բացակայում է հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ,

- Բացակայում է առաջարկվող ապրանքի տեխնիկական առաջադրանքը,
- Հավելված 1՝ դիմում-հայտարարության մեջ թերի է լրացված մասնակցության իրավունքի վերաբերյալ պահանջը, մասնավորապես բացակայում է մրցույթի ծածկագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Տվյալներ մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հաշվի առնելով 5.1 կետը, մերժել **«Բրիդջ» ՍՊԸ**-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել «Վամար Գրուպ» ՍՊԸ-ի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7.2 Հրապարակել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Անահիտ Հակոբյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Արմինե Սահակյան /քարտուղար/